վածքների մի մասը։ Դա հնարավորություն տվավ վանքի առաջնորդ Մարտիրոս եպիսկոպոսին ձեռնամուխ լինելու շենքերի նորոգության, որը սակայն ընդհատվեց բռնկած ռուս-պարսկական պատերազմի հետևանքով։ Պարսիկները անսպասելի ներխուժելով Զանգեզուր՝ վանքը ենթարկեցին թալանի, գերի վերցրին վանահորը և տարան Թավրիզ։ Միայն Թուրքմենչայի դաշնագրությունը կնքելուց հետո նա կարողացավ վերադառնալ իր վանքն ու շարունակել նորոգությունները և սկսած բարեկարգությունը։ Երբ 1840 թ. օրենքի հետևանքով կառավարությունը ձեռնարկեց կալվածատիրական իրավունքների նշման, վանքն էլ զինվելով իր մոտ եղած հին վավերաթղթերի և ծերունիների վկայություններով՝ վարչական և դատական ճանապարհով կարողացավ որոշ չափով վերականգնել իր կալվածատիրական իրավունքները և դարեվերջին նրա անվիճելի սեփականությունը ճանաչվեցին ամբողջովին կամ միայն մի մասով ինը գյուղերի հողերը՝ Հալիձորում, Խոտում, Շինուհայրում (Շնեհերում), Տանձատափում, նույն Տաթևում, Լծենում, Աշոտավանում (Աղքենդում), Սիսիանում (Ղարաքիլիսայում-Սիսավանում) և Քիրսում։ Իր հողերը միաբանությունը չէր կարողանում մշակել սեփական ուժերով։ Տաթևի կալվածատեր Խուդաբաշխի-բեգ Օրբելյանի վկայությամբ, որը ծնվել է 1819 թվին և վախճանվել է 1931 թվին, մեր գիտարշավից մի քանի ամիս անց, նա՝ իր երկարատև կյանքի միջոցին, ավելի քան մեկ դարի ընթացքում երբեք չէր տեսել վանքում 4—5 վարդապետից ավելի։ Հողերի մշակումը զանազան պայմաններով հանձնվում էր գյուղացիներին, վերջերս աճուրդով։ Բացի այդ հասույթից, վանքը հավաքում էր գավառի բոլոր գյուղերից դրամով՝ լուսգին, մայիսին՝ պանիր, աշնանը՝ ցորեն և յուղ, Զատկին՝ ձու, Սիսիանում՝ տարվա ընթացքում նաև մի քանի փութ աղ։ Այս մթերքը գործադրվում էր վանքի միաբանության պարտքերը հոգալու համար, իսկ դրամի միայն մի փոքր մասը հատկացվում էր տեղական դպրոցին և վանքի միաբանության կարիքներին, խոշորագույնը փոխադրվում էր Էջմիածին։

Չնայած այն հանգամանքին, որ վանքի միաբանները մեծ մասամբ թերուս և տգետ մարդիկ էին, վանքը վայելում էր մեծ հեղինակություն և շարունակում էր գրավել մեծաքանակ ուխտավորների ոչ միայն գավառի գյուղերից, այլև հեռավոր վայրերից, որոնց այստեղ գրավում էր և հրաշագործ շարժվող սյունը և բազմաթիվ սրբությունները՝ սուրբ խաչի կտորը, սուրբ Հակոբի և այլ սուրբերի մասունքները, որոնց վերագրվող զորության վրա ապավինում էին բարեպաշտ այցելուները, թե՛ հայ և թե՛ թուրք։ Հեղափոխության նախօրյակին վանքի տնտեսական կացությունը արդեն չափազանց քայքայված էր։ Նա խույս էր տալիս նույնիսկ մերձավոր հողերի մշակմանը մասնակցելուց՝ տալով սերմ և հաց բանվորներին և հրաժարվում էր ինքը այդ բերքին վերահասու լինելուց։ Իր անձնական աշխատանքն այդ չափով գոնե ներդնելու փոխարեն նա անցել էր այստեղ էլ եկամուտը դրամական հատուցումի վերածելուն։ Վանքը որպես կալվածատեր արդեն շատ աննշան և հետամնաց դեր էր կատարում գավառի տնտեսական կյանքի մեջ։ Նա նույնիսկ ի վիճակի չէր իր սեփական եկամուտներով ծածկել խախտված շենքերի նորոգության ծախքերը։ Թե՛ տաճարը, թե՛ խուցերը գտնվում էին ավերման ճանապարհին։ Միայն կողմնակի օժանդակությամբ նրան հաջողվեց 1890-ական թվականներին սկսել և մեծ դժվարությամբ ավարտել նոր զանգակատան կա-